# ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Սովետահայ գիտությունը ծանր կորուստ կրեց. երկարատև հիվանդությունից հետո, հոկտեմբերի 20-ին, 69 տարեկան հասակում վախճանվեց նշանավոր հայագետ, հնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Կարո Գրիգորի Ղաֆադարյանը։

Կ. Գ. Ղաֆադարյանը ծնվել է 1907 թ. Ախալցխայում։ Ավարտելով միջնակարգ դպրոցը Հայրենի քաղաքում, նա 1926 թ. աշխատանքի է անցնում Վրացական ՍՍՀ Վալե գյուղում, իբրև գավառական գործադիր կոմիտեի քարտուղար։ Հաջորդ՝ 1927 թ. Կ. Գ. Ղաֆադարյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը և 1931 թ. ավարտում է նույն ֆակուլտետի պատմական բաժինը։ Դեռևս 1928 թ. երկրորդ կուրսի ուսանող Կ. Ղաֆադարյանն առաջ է քաշվում հնագիտության ամբիոնի գծով և մասնակից է դառնում հնագիտական աշխատանքներին։

1931 թ. ՀՍՍՀ Լուսավորության ժողկոմատը Կ. Ղաֆադարյանին նշանակում է աշխատանքի Էջմիածնի Ձեռագրատուն-Մատենադարանում, որտեղ երիտասարդ գիտական աշխատողը նվիրվում է ձեռագրական հարուստ ֆոնդերի ուսումնասիրությանը և շուտով հրատարակության է պատրաստում երկու աշխատություն՝ «Հայկական գրի սկզբնական տեսակները» և «Ալքիմիան պատմական Հայաստանում», որոնցից առաջինը լույս է տեսնում 1939 թ., երկրորդը՝ 1940 թ.։

1932 թ. Կ. Ղաֆադարյանը աշխատանքի է տեղափոխվում ՀՍՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտում (հետագայում՝ Պատմության և գրականության ինստիտուտ) և իր ամբողջ գիտելիքներն ու կորովը նվիրում է Հայաստանի պատմա-հնագիտական հուշարձանների ուսումնասիրությանը։ Նա եռանդուն մասնակցում է պատմական հուշարձանների հաշվառման, պահպանման և պեղումների ուղղությամբ Հայաստանում տարվող համարյա բոլոր աշխատանքներին։

Կ. Ղաֆադարյանը զգալի ջանքեր գործադրելով՝ հրատարակության պատրաստեց հայ ճարտարապետության պատմության մեծավաստակ ուսումնասիրող Թորոս Թորամանյանի աշխատությունների երկու հատորները, որոնք նրա խմբագրությամբ լույս ընծայվեցին առաջին հատորը՝ 1942 թ., երկրորդը՝ 1948 թ.։

Սկսած 1960 թ. փետրվարից մինչև մահը Կ. Ղաֆադարյանը գլխավորել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի հին և միջնադարյան հնագիտության բաժնի, իսկ վերջինիս երկու մասի բաժանվելուց հետո՝ միջնադարյան հնագիտության բաժնի աշխատանքները։

Հայաստանի պետական պատմական թանգա-

րանի դիրեկտորի, թե ինստիտուտի բաժնի վարիչի պաշտոնում Կ. Ղաֆադարյանը հաջողությամբ ղեկավարել է վարչական աշխատանքը հնագիտական դաշտային-հետազոտական և գիտական-ստեղծագործական աշխատանքների հետ։ Տասնյակ տարիներ նա ղեկավարել է հնագիտական ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության, պեղումների, միջնադարյան հուշարձանների վրա փորագրված արձանագրությունների ընդօրինակման, հավաքման նպատակով կազմակերպված բազմաթիվ արշավախմբերի աշխատանքները, անձամբ հավաքել և հրատարակության է պատրաստել մեծ թվով վիմագիր արձանագրություններ։ Կ. Ղաֆադարյանը ձեռնարկեց իր ուսումնասիրությունների արդյունքները հրատարակել մի մատենաշարով, որից հասցրեց հրատարակել չորս հատոր՝ «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» (1948 թ.) «Սանահինի վանքը և նրա արձանագրությունները» (1957 թ.), «Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները» (1963 թ.) և «Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրու-

թյունները» (1975 թ.)։ Նշված մատենաշարի հատորներում հուշարձանների վիմագիր արձանագրությունները մեջ են բերված նման նյութերի հրատարակման ժամանակակից բարձր պահանջներին համապատասխան՝ հեղինակային ընդօրինակությունների հիման վրա պատրաստված են արձանագրությունների գրչանկարները՝ պահպանելով տառերի ձևերն ու չափերը, ըստ հնարավորին դրված են արձանագրությունների լուսանկարները, տրվում է բնագրերի վերծանությունը տարընթերցումներով և ծանոթագրություններով։ Հրատարակված հարյուրավոր արձանագրությունները հայ ժողովրդի միջնադարյան պատմության, լեզվի և մշակույթի ուսումնասիրության անգնահատելի աղբյուրներ են։

Կ. Ղաֆադարյանի հնագիտական ուսումնասիրությունների շարքում բացառիկ տեղ են գրավում Դվինի պեղումները։ 1937—1939 թթ. նա մասնակցել է այդ պեղումներին, իբրև արշավախմբի ղեկավար պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանի տեղակալ, իսկ սկսած 1946 թ., երբ վերսկսվեցին Դվինի պեղումները, Կ. Ղաֆադարյանը 30 տարի անընդմեջ եղավ դրանց ղեկավարը։

Դվինի պեղումներով հայտնաբերված հուշարձաններն ու հարուստ նյութերը բացառիկ նշանակություն ունեցան Հայաստանի միջնադարյան քաղաքների պատմության, նրանց նյութական արտադրության, կյանքի, կենցաղի, մշակույթի, ինչպես և այլ երկրների հետ առևտրատնտեսական և մշակութային կապերի ուսումնասիրության համար։ Այդ պեղումների արդյունքներն իրենց նշանակությամբ դուրս են գալիս պատմական Հայաստանի սահմաններից և ստանում են ընդհանուր կովկասյան և մերձավորարևելյան արժեք ու հնչեղություն։ Պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը Դվինի պեղումների արդյունքներն ամփոփել է իր երկհատոր աշխատության մեջ, որոնցից առաջինը «Դվին քաղաքը և նրա պեղումները (1937—1950 թթ.)» լույս է տեսել 1952 թ. և պաշտպանվել իբրև դոկտորական դիսերտացիա 1953 թ., իսկ երկրորդ հատորը հանձնված է տպագրության։

Նշված ծավալուն աշխատություններից բացի պրոֆ. Կ. Ղաֆադարյանի գրչին են պատկանում նաև մի քանի տասնյակ գիտական հոդվածներ, նվիրված հնագիտությանը, հայ ճարտարապետությանը, հայերեն վիմագիր արձանագրություններին և ընդհանրապես հայագիտության բազմաղան հարցերին։

Պրոֆ. Կ. Ղաֆադարյանի գիտա-կազմակերպական գործունեության մեջ առանձին տեղ է գրավում թանգարանային աշխատանքը։ Հայաստանի պետական պատմական թանգարանի դիրեկտորի պաշտոնը մեծ նվիրումով վարելով 25 տարի անընդմեջ (1940—1965 թթ.), նա կարգի է բերել թանգարանային ֆոնդերը, կազմակերպել է բազմաթիվ ցուցադրություններ, դրանց թվում՝ Սասունցի Դավթի 1000-ամյակին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակին և Հոկտեմբերյան հեղափոխության 30 և 40-րդ տարեդարձներին նվիրված ծավալուն ցուցահանդեսները։ Հայաստանի տարբեր շրջաններում կազմակերպել է տեղական թանգարաններ և ցուցադրություններ։

Խոշոր են Կ. Ղաֆադարյանի ծառայությունները թանգարանագիտության, ինչպես նաև թանգարանային աշխատողների հնագիտական կադրերի պատրաստման գործում։ Երկար տարիներ նա դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանում և մանկավարժական ինստիտուտում, հնագետ մասնագետներ է պատրաստել նաև ասպիրանտուրայի միջոցով։

Կ. Ղաֆադարյանը 1965 թ. մինչև իր մահը եղել է Սովետական Հայաստանի հիմնական հայագիտական օրգանի՝ «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական կոլեգիայի ամենագործունյա անդամներից, նրա մշտական հեղինակներից մեկը։

Բազմակողմանի և արգասավոր է եղել պրոֆ. Կ. Ղաֆադարյանի՝ հայագետ գիտնականի գործունեությունը, որը լայն ճանաչում է գտել դիտական հասարակայնության կողմից և արժանացել է հանրապետության կուսակցական և կառավարական վերադաս մարմինների բարձր գնահատանքին։ Իր բեղմնավոր և անբասիր աշխատանքի համար Կ. Ղաֆադարյանը պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Պատվո նշան» շքանշաններով և մի շարք մեդալներով։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը 1975 թ. Կ. Ղաֆադարյանին շնորհեց ակադեմիայի ամենամեծ պարգևը՝ «Մեծարման գիր»։

Բազմավաստակ գիտնականի՝ Կարո Գրիգորի Ղաֆադարյանի աշխատություններն իրենց արժանի ու մնայուն տեղն են գրավել հայագիտական գրականության մեջ. նրա անունն ու հիշատակը անմոռաց կմնան։

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ